ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի մայիսի 23-ից 25-ը

Իրանի Իսլամական Հանրապետություն (ք. Թեհրան) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Էդվարդ Հովհաննիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Իրանի Իսլամական Հանրապետություն, ք.Թեհրան, մայիսի 23-ից 25-ը

4. Հրավիրող կողմը՝

Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայության ղեկավարի և այլ պաշտոնատար անձանց հետ հանդիպումներ՝ երկկողմ համագործակցության ընդլայնման հարցերը քննարկելու նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

Հանդիպումների ընթացքում քննարկվել են Մեղրիի սահմանային անցակետի արդիականացման ընթացքի, տրանսպորտային միջոցների և ապրանքների միջազգային փոխադրումների հետ կապված Իրանի և Հայաստանի միջև էլեկտրոնային տվյալների նախնական փոխանակման առավել արդյունավետ իրականացման հետ կապված հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայության ղեկավարի հետ հանդիպման ընթացքում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահը ներկայացրել է, որ Մեղրիի սահմանային անցակետի արդիականացման արդյունքում վերափոխված շենքային պայմանները ժամանակակից չափանիշներին համապատասխան

ընթացակարգեր կիրառելու հնարավորություն կստեղծեն՝ խթանելով բեռնափոխադրումների արագ սպասարկումը:

Կայացել է հանդիպում Իրանի ազգային հարկային ծառայության նախագահ Օմիդ-Ալի Փարսայի հետ, որի ընթացքում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահը գործընկերոջը ներկայացրել է Հայաստանի հարկային վարչարարությունում կիրառվող առաջադեմ թվային տեխնոլոգիաների, պետության և բիզնեսի միջև թվային փոխգործակցության կառուցման շրջանակում կիրառվող գործիքակազմը:

Այցի շրջանակներում Իրանի Իսլամական Հանրապետությունում ՀՀ դեսպանության աջակցությամբ տեղի է ունեցել նաև հայ-իրանական գործարար համաժողով, որի ընթացքում ներկայացվել են Հայաստանի հարկային, մաքսային օրենսդրության և վարչարարության ոլորտներում նոր փոփոխությունները, վերջին տարիներին իրականացված բարեփոխումները, որոնք էական ազդեցություն են ունեցել երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման գործում:

Համաժողովից առաջ առանձնազրույց է տեղի ունեցել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Էդվարդ Հովհաննիսյանի և Թեհրանի առևտրի, արդյունաբերության, հանքերի և գյուղատնտեսության պալատի նախագահ Մասուդ Խանսարիի միջև: Կողմերը կարևորել են երկու երկրների գործարարների միջև ձևավորված գործակցությունը և ընդգծել զարգացման հսկայական ներուժի առկայությունը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպումների արդյունքում կողմերը պայմանավորվել են ակտիվացնել երկու երկրների համապատասխան ստորաբաժանումների գործակցությունը, ինչը դրական ազդեցություն կունենա մաքսային կանոնների խախտման դեպքերի բացահայտման, առկա խնդիրների առավել արագ և օպերատիվ լուծման համատեքստում՝ տրանսպորտային միջոցների և ապրանքների միջազգային փոխադրումների հետ կապված Իրանի և Հայաստանի միջև էլեկտրոնային տվյալների նախնական փոխանակումն առավել արդյունավետ իրականացնելու և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարն ավելի արդյունավետ և փոխհամագործակցված կազմակերպելու նպատակով: Պայմանավորվածություն է ձեռքբերվել նաև ստեղծել համատեղ աշխատանքային խումբ՝

օպերատիվ տեղեկատվության փոխանակման, ծագած խնդիրների լուծման և միջազգային համաձայնագրերով նախատեսված բոլոր գործառույթները կյանքի կոչելու նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահը և ԻԻՀ մաքսային ծառայության ղեկավարը կարևորել են Հայաստանի և Իրանի մաքսային մարմինների միջև հետագա փոխգործակցության անհրաժեշտությունը:

Կարևորելով նաև Հայաստանի և Իրանի հարկային մարմինների միջև փոխգործակցության ընդլայնման անհրաժեշտությունը՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահը հրավիրել է Իրանի ազգային հարկային ծառայության փորձագետներին այց կատարել Հայաստան՝ հարկային վարչարարության ոլորտում կիրառվող էլեկտրոնային համակարգերին ծանոթանալու, ինչպես նաև հնարավոր խորհրդակցության տրամադրումը քննարկելու նպատակով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN EDVARD 2001830505

26.05.2021թ.